

## ԿԱՐԾԻՔ

ԱՆՆԱ ՇԱՀԵՆԻ ՄԿՐՏԻՉՅԱՆԻ «ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ 1988-1994 թթ. ԳԳ ՄԱՍՈՒԼՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ Ժ. 01.06 «ԺՈՒՈՆԱԼԻՍՏԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վերջին մի քանի տասնամյակի ընթացքում երկարատև հակամարտության և պատերազմների արդյուքնում Արցախում և Արցախի շուրջ ձևավորված հասարակական-քաղաքական օրակարգերն, ստեղծված պատմական բարդ և անորոշ ժամանակաշրջանը, բազմավեկտոր տեղեկատվական հոսքերը լուրջ մարտահրավերներ են ստեղծել: Այս ամենի համատեքստում բավական մեծ և պատասխանատու հանձնառություն են ստանձնում մասնագիտական հանրայթի այն ներկայացուցիչները, որոնց գիտահետազոտական աշխատանքի արգասիքը պետք է լինի պատմական ճշմարտության վերհանումն ու ակադեմիական արդարամտության հաստատումը:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման և ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ճշմարտացի ներկայացման գործում տպագիր մամուլին մեծ առանձնաշնորհումներ են վերապահված: Կարևորելով 1980-ականների վերջերին արցախահայության արդար պահանջը և 1988-1994 թթ. պատմական կարևոր իրողությունները՝ ատենախոս Աննա Շահենի Մկրտիչյանը գիտական բարեխիղճ աշխատանքով քննության է առել Ղարաբաղյան շարժման արձագանքները հայաստանյան մամուլում: Գիտահետազոտական քննության է առնվել մի այնպիսի ժամանակահատված, որը բախտորոշ էր ոչ միայն Արցախի, այլև՝ ողջ հայության համար: Կերպափոխվող ազգային-գաղափարախոսական ու հասարակական մտածելակերպի, քաղաքական ու հոգեւոր-մշակութային կողմնորոշիչների հետ վերափոխվեց նաև հայաստանյան մամուլը, որտեղ խորհրդային գաղափարախոսության պայմաններում Ադրբեջանի կողմից իրականացվող

Էթնիկ զտման քաղաքականությունը մասմաբ տեղեկատվական տաբու էր, երբեմն էլ՝ որոշակի փաստերի քողարկմամբ կես-ճշմարտության տարածում:

Ատենախոսը բանիմացորեն է հետազոտել Արցախյան շարժման, ազատամարտի, ՀՀ և ԼՂՀ անկախությանը հաջորդած տարիների մամուլի՝ դարաբաղյան շարժմանն առնչվող հրապարակումները, ի հայտ բերել առկա միտումները, օրինաչափություններն ու ներքին տրամաբանությունը, կատարել ուշագրավ եզրակացություններ: Այսպես, հեղինակը համադրելով անցյալի ու ներկայի պատմա-քաղաքական իրողություններն արտացոլող լրատվությունը, բացահայտում է, որ խորհրդահայ մամուլն ու ազգային իրադարձություններն ունեն փոխպայմանավորված ուրույն նկարագիր:

Ատենախոսի աշխատանքն ունի հստակ գիտական կառույց՝ տրամաբանական ու ճիշտ կատարված բաժանումներով: Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, ուսումնասիրության առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական-մեթոդական հիմքերը :

Ղարաբաղյան շարժման արձագանքների մեդիապատկերը համակողմանի ներկայացնելուց առաջ ատենախոսը կարևոր է համարել նախ ներկայացնել մինչպատերազմյան շրջանի, մասնավորապես՝ Ղարաբաղյան շարժման ակունքները Խորհրդային Հայաստանի մամուլում, ապա առաջին գլխի երկու ենթազուվներում քննել խորհրդային գաղափարախոսության պայմաններում հայաստանյան մամուլի սահմանափակ հնարավորություններն ու հաջորդող տարիներին ազգային պատմական հարցերը որոշակի զգուշավորությամբ ներկայացնելու փորձերը, ընդգծել ազգային խնդիրների համար պայքարի ելած հայության պահանջի անհրաժեշտությունն ու իրականացված գործնական քայլերի նպատակահարմարությունը:

Երկրորդ գլուխը («Ղարաբաղյան շարժման լուսաբանումը Խորհրդային վերջին տարիներին եվ մամուլի դերը հանրության արժեքային-գաղափարական դաշտի ձեվավորման մեջ (1988-1991 թթ.)») արտացոլում է խորհրդային գաղափարախոսության պայմաններում զարգացող Ղարաբաղյան շարժումը և մամուլի դերը հանրության արժեքային-



գաղափարական դաշտի ձևավորման գործում: Առաջին ենթագլխում («ԼՂ-ի իրադարձությունների լուսաբանումը խորհրդային գաղափարախոսության պայմաններում») ներկայացվել են հայաստանյան լրատվադաշտի ընդհանուր պատկերը. հասարակական-քաղաքական կյանքում արձանագրվող տեղաշարժեր, մամուլի պատմության նորագույն շրջանի մեկնարկ, ինչպես նաև՝ մամուլի գործունեության կարգավորման իրավական մեխանիզմների ներդրում:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում «Հայ հրապարակախոսների արցախյան շեշտադրումները և դրանց դրսևորումները մամուլում լսարանի վրա ներգործության համատեքստում» ենթագլխում ատենախոսը հարուստ փաստական նյութի հենքի վրա մանրակրկիտ վերլուծություններով ներկայացրել է ժամանակի հեղինակավոր մտավորականների մտահոգությունները, արդարության համար պայքարի գաղափարական իմաստավորումը՝ ընդդեմ ադրբեջանական քարոզչամեքենայի հակահայկական տեղեկատվական քաղաքականության և կեղծարարության:

Նորանկախ Հայաստանում նոր լրատվադաշտի ձևավորումը դիտարկելով որպես ազգային զարթոնքի, Արցախի ինքնորոշման գերագույն նպատակի, Սփյուռքի հետ մերձեցման գաղափարական սահմանափակումների վերացման և մամուլի բովանդակային վերակառուցման կենսական բաղադրիչ՝ ատենախոսը աշխատանքի երրորդ գլուխը վերնագրել է «Անկախ Հայաստանի մամուլի ձեւավորումը՝ հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում (1991-1994 թթ.)»՝ հիմնավորելով ու ներկայացնելով անկախ մամուլի ձևավորումը որպես 88-ի շարժման և ՀՀ անկախացման արգասիք:

Ինչպես շարժմանը նախորդող տարիների, այնպես էլ գոյապայքարի և անկախության գործընթացում դարաբաղյան շարժմանն ամնչվող բոլոր հրապարակումները Մկրտիչյանը ներկայացրել է արժեիմաստային ուրույն համակարգի համատեքստում Արցախի քաղաքական խնդրի կարգավորումը կապելով ինքնորոշման իրավունքի հետ:

Վերջում մի քանի խոսք աշխատանքում տեղ գտած որոշ թերությունների մասին:

1. Ուսումնասիրության «Թեմայի հրատապությունը և գիտական նորույթը» բաժնում (էջ 4) ատենախոսը հետևյալ միտքն է արտահայտում, որ «Արցախի Հանրապետությունը շուրջ երեք տասնամյակ գոյություն ունեցող պետություն է՝ համապատասխան պետական ինստիտուտներով, մինչդեռ այն դեռևս ճանաչված չէ աշխարհի որևէ պետության կողմից»: Կարծում ենք՝ այս ձևակերպումը մասնավորեցման կարիք ունի: Դիցուք՝ հակամարտության պատմության ողջ ընթացքում տարբեր երկրների խորհրդարաններ և նահանգային/քաղաքային խորհուրդներ ընդունել են Լեռնային Ղարաբաղի (Արցախի Հանրապետության) ճանաչման մասին բանաձևեր՝ ի պաշտպանություն Արցախի Հանրապետության ժողովրդի ինքնորոշման իրավունքի:
2. Ցանկայի կյիներ, եթե բովանդակային վերլուծության ենթարկված մամուլի հրապարակումները զուգորդվեին վիզուալիզացված քանակական վերլուծությամբ:
3. Ատենախոսության հեղինակը աշխատանքում օբյեկտիվորեն ընդգծել է ոչ միայն ոլորտի առաջընթացները, այլև վստահության ճգնաժամի մթնոլորտում մամուլի բացթողումները: Աշխատանքը նկատելիորեն կշահեր, եթե ատենախոսը «Եզրակացություն» բաժնում վերջիններիս վերացմանն ուղղված կիրառական ելք ենթադրող առաջարկություններով հանդես գար:

Ա. Մկրտիչյանն ունի գիտական վերլուծական միտք, դիտարկումներն ու դիրքորոշումները տրամաբանված շարադրելու կարողություն: Դրվատանքի արժանի է ատենախոսի փաստահավաք աշխատանքը, որի արդյունքում պատմահամեմատական ինքնատիպ շարադրանքով ուրվագծվել է ոչ միայն գոյապայքարի ու զինադադարից հետո ընկած ժամանակահատվածի մամուլի ամբողջական պատկերը, այլև հայաստանյան մամուլի խորհրդային շրջանի մշակութային կյանքը՝ տեղեկատվական շրջափակման պայմաններում ազգապահպան գաղափարների նշանակության տեսանկյունից:

Այնուհանդերձ, այդ եւ մասնակի այլ թերացումները բնավ չեն արժեզրկում այս կարեւոր ու պահանջված ուսումնասիրությունը: Ատենախոսության վերոհիշյալ արժանիքները նկատի ունենալով՝ միջնորդում եմ 012 մասնագիտական խորհրդին՝ ԱՆՏԱ Շահենի Սկրոպչանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս:  Շուշան Ռոբերտի Ասկարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

17 հունիսի 2022 թ.

Շ. Ասկարյանի ստորագրությունը հասարակած է.Ճ.  
«Զորքեր» ՖԶ փնտրելու Մարիկ ԱյթուՆյան

